

են. Այդ «բարձրագույն» մասին եւ մանրամասն տեղեկութիւններ չունեմ. բայց կարելի է վստահ լինել, որ նա տեղական «բեկերից» մէկն է, որի կուրծքը, ով գիտէ, զարգարված էլ է բազմաթիւ նշաններով։ Ուրեմն, համոզմունքը միանգամայն հեղինակաւոր աղբիւրից է բղխում։

Այրեւ բոլոր լրագիրները, այրեւ բոլոր գրողներին։

Եւ իրաւ, ինչպիսիք են նրանք։
Ինչպիսիք է հրապարակական դատաստան, երբ մի մեծաշուք աղա կարող է շատ լաւ դատաստան անել եւ վճռել, որ դպրոցը Բենիկի թեւերի տակ ոսկեզար է անցկացնում։ Այրենք, ոչնչացնենք քննադատութիւնը, անբաւականութիւն յայտնող միտքը։ Այնուհետեւ մենք շատ հանգիստ, շատ երջանիկ կը լինենք։

Խայթը վատ բան է, մանաւանդ երբ նա ծակում է անբարեխղճութեան հերոսներին, աղալութեան հաստ կաշին։ Զարդել, ոչնչացնել նրան։

Ի՞նչ հարկաւոր է եւ ումին հարկաւոր է չիտակութիւնը, ազնուութիւնը, անկեղծութիւնը։ Եւ թող կորչեն այդ անմիտ անուաններ. տըւէք մեզ փարիսեցիութիւն, տուէք մեզ ձեռնածոներ, որոնք թող փչել կարող են, որոնք ոսկեղծել գիտեն նոյն իսկ ցեղը։

Այրեցէք, ոչնչացրէք լրագիրներն էլ, գրողներին էլ...

Յունիսի 10-ը պատմական օր էր չուչեցու համար։ Դա նրա կրթութեան, նրա առաջադիմութեան, նրա մտաւոր կենդանութեան դարադուլն է. որովհետեւ նա այդ օրը հասկացաւ, թէ ինչ չարք է եղել հրապարակախօսութիւնը։ Այսուհետեւ չուչեցուն էլ ոչ ոք չէ խանգարի հակապալան թուրքներ գործելու գէպի առաջ, գէպի կատարելութիւն. որովհետեւ նա բնութեան թէ ինչ է եւրօպականացումը գաղափարը. դա այն է, որ չը պիտի լինի հասարակական կարծիք, մամուլ, գրող, քննող, դատաւիտող։

Եւ ես ամենայն ակնածութեամբ գլուխ եմ իջնում Լաւրաբադի մայրաքաղաքում արած այդ մեծ, անմահական գիւտի առաջ։ Խոստովանում եմ իմ յանցանքը. ես աշխատում եմ «Մշակի» մէջ, ուր տպւած էին յօդուածներ Բենիկ վարդապետի մանկավարժական հրաշագործութիւնների դէմ. ինչ էլ հասան նրա արձակած շանթերը։ Եւ ես ասում եմ, այն, ճիշդ է։

Ճիշդ է, որ պէտք էր անթափանցելի վարդապետի ծածկել ամեն ինչ։ Ճիշդ է, որ չը պէտք էր մեծամտութեան եօթնորորդ երկնքից կապ մանկավարժի փէշից ընել եւ ցած բերել ու գործ պահանջել։ Ճիշդ է, որ պէտք էր գովել, փառաբանել թերթիւնը, անբարեխղճութիւնը։ Ճիշդ է, որ պէտք էր մոռանալ, չեղած համարել 600—700 երեխաներին եւ շոյել մի խումբ մարդկանց գլուխները, որպէս զի նրանք վայելէին իրանց կողմի օժիւրները եւ մի եւ նոյն ժամանակ փոռաւորվէին հէնց այն պատճառով, որ կատարեալ դժբաղդութիւն են դարձել մի հիմնարկութեան համար։

Եւ այն ժամանակ Շուշու աղաները կը բարեհաճէին հաւանել մեզ, գրողներին։

Էլ չեն իմանում այդ փերով լիքը մսակուտերը, թէ մենք, գրողներս, հէնց այդ բարեհաճութիւնից, հէնց այդ հաւանութիւնից ենք փախչում։

Դա անէ՞ք կը լինէր մեզ համար. եւ ամբողջ սրտով հաւատաւոր, ընթերցող, որ այդ անէ՞ք չի գայ մեզ վրա։ Վատութիւնը, եօթնորորդ երկնքում էլ եթէ վատապարկելու լինի, չի պրծնի մեր ձեռքից...

Լ.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Վանանց խնդրի առթիւ. Տաճատ աւագ քահանայ Մարգարեան. 64 եր. 169 գ. 40 Կ. Թիֆլիս 1901.

Միջնադարեան եկեղեցական ժողովներից մէկում, եթէ չեմ սխալվում Մակոնում (581 թ.), լուրջ կերպով հարց էր բարձրացել մարդ է արգիւց կրնա թէ ոչ։ Եկեղեցական հայրերը երկար վիճում էին, մինչեւ որ յիշեցին, որ աւետարանում Գրիգորի «որդի մարդոյ» է կոչվում, մինչդեռ նա Մարիամ Կոյսի որդին էր, իսկ Մարիամ Կոյսը կին էր։

Այդ միջնադարեան ժողովականներին է յիշեցնում Տաճատ աւագ քահանայ Մարգարեան իր դատողութիւններով. Դարվինի, Լամբերտի եւ ուրիշ գիտնականների անունը տեղի-անտեղի տալով հանդերձ, նա սուրբ գրքիցն է վերցնում իր հայեացքների հիմնական սկզբունքները։

Կնոյր վիճակված է միայն եւ միմիայն մայր լինել, պնդում է այդ աւագ քահանայն. «Ի՞նչ է կնոյ նշանակութիւնը»—հարց է տալիս նա, եւ չարունակում է. «Մեր պատահաւոր շատ հակիրճ կերպով տալիս է մեզ սուրբ գրքը. Յաւուր ծնելի զաւակներ...»

Եթէ մենք նոյն տեսակետից ուզէինք վիճել տէր հօր հետ, կարող էինք առաջ բերել հէնց Եւային, որ, ս. գրքի տեսլով, ամենուին մայր լինելու համար չէր ստեղծված եւ մայր չէր լինել, եթէ անպիտան օձը նրան չը խաբէր. կարող էինք առաջ բերել Կոյսերին, որոնց եկեղեցին եւ եկեղեցու ներկայացուցիչ Տաճատ քահանայն, որ սակայն ստորագծելով մէջ է բերում տիկին Մարիամի խօսքերը. «Ամուսնու մէջ է կայանում կնոյ կեանքի միակ նպատակը...». կարող էինք առաջ բերել նախ անցեալ դարի վերջի կին գրող Մէրի Ուոլսթոնկրաֆթի սրամիտ առարկութիւնը, թէ, եթէ կանայք սովորեն այս աշխարհում միշտ կենտրոնացնել իրանց մտքերը ամուսնութեան վրա, ինչ պէտք է անեն նրանք այն աշխարհում, ուր չը կայ ամուսնութիւն։

Մակայն, կանանց հարցը այն հարցերից չէ, որոնք կարող են վճռվել ս. գրքի վկայութիւններով։ Դրական փաստերի եւ երեւոյթների լուրջ ուսումնասիրութիւն է հարկաւոր դրա համար։

Գործողի հեղինակը այդ էլ է փորձում անել, բայց ապացուցանում է միայն իր կատարեալ անկարողութիւնը։

Ամենից առաջ, տէր հայրը ծանօթ չէ այն հարցի էութեան հետ, որ նա ուզում է վճռել. նրա կարծիքով, կանանց իրաւունքների պաշտպանողը պնդում են, թէ կնոյ չը պէտք է կապվի տղամարդու հետ, առանց տղամարդու պէտք է մնալ եւ այլն։ Ճիշդ է, եղել են այդպիսի ծայրայեղ մտքեր յայտնողներ, եղել են այդպիսի տիպեր, որոնք նոյն իսկ վէպի նիւթ են դարձել, բայց դրանք ուսուցիական կամ հրահանգող բացառութիւններ են, մինչդեռ այն կանայք, որոնք ֆէմինիստների համախարհային կուսակցութիւնն են կազմում, որոնք կուռն են եւ աշխույթեալ կուռն կանանց իրաւունքների համար, միտինգներ ու համաժողովներ կազմելով եւ թերթեր հրատարակելով,—այդ կանայք՝ ձգտում են ոչ թէ վերացնել ամուսնութիւնը, այլ վեճիկներ նրան, ոչ թէ կղզիանալ տղամարդկանցից, այլ ձեռք ձեռքի տուած նրանց հետ տանել մարդկութիւնը դէպի իդէալականը։

Տաճատ քահանայն ոչ միայն ծանօթ չէ իր քննած խնդրի էութեան հետ, այլ եւ լաւ ծանօթ չէ այն հեղինակների հետ, որոնց հայեացքները կամ գրութեան հատուածները առաջ է բերում։ Այդպէս օրինակ 47 երեսում նա պնդում է, թէ վերոյիշեալ Մէրի Ուոլսթոնկրաֆթ «ազատ կենակցութեան» քարոզիչ էր, մինչդեռ իրօք նա ամուսնութիւնը համարում էր գործող հասարակական առաքելութիւնների հիմքը։

Մի ուրիշ օրինակ. Ուզելով ապացուցանել, թէ հոշակաւոր թագաւոր կանանց օրինակը չէ կարող հաստատել կանանց հանճարեղութիւնը, Տաճատ աւագ քահանայն առաջ է բերում այն փաստ միտքը, թէ այդ թագուհիների ժամանակ իսկական կառավարողները եղել են տղամարդիկ, սակայն, հարցի հետ լաւ ծանօթ չը լինելով, նա այդ միտքը վերագրում է Ջոն Ստուարտ Միլլին, մինչդեռ Միլլը իր գրքում («Կնոյ ստորադրեալ վիճակը») ընդհակառակը ապացուցանում է այդ մտքի անհիմն լինելը։

Անա Տաճատ քահանայի խօսքերը. «Այսպէս, Ջոն Ստուարտ Միլլն ասում է, որ երբ հնդկական իշխանութիւններից որ եւ է մէկը կառավարում է առանձին եռանդով եւ հմտութեամբ, դուրս է գալիս, որ չորսից երեք դէպքում կառավարողը լինում է կին։ Բայց այս էլ պէտք է յիշել,—չարունակում է Ջոն Ստուարտ,—որ այնտեղ, ուր պետութիւն կառավարողը կին է լինում, անշուշտ նրա կողքին կանգնած է նաեւ մի տղամարդ, որ ոչ միայն կողմնակի կերպով այդ պետութիւնն է կառավարում, այլ եւ նոյն իսկ այն կնոյն, որի ձեռքին է իշխանական իրաւունքը» (եր. 58)։

Բայց ահա ինչ է ասում ինքը Միլլը։
Այն միտքը, թէ թագուհիները լաւ են կառավարել, որովհետեւ նրանց օրով իշխանութիւնը գտնվել է տղամարդկանց ձեռքին, նա անուանում է «անաշուղ սրբաբոսութիւն», «դատարկ խօսք», իսկ ծանօթութեան մէջ, իբր ապացուց կանանց վարչական ընդունակութիւնների բերում է Հնդկաստանը, ուր կանայք զանազան ծառայութիւններում ծառայել են իրենց իշխանութեամբ։

Թիւնների բերում է Հնդկաստանը, ուր կանայք իրաւունք չունեն դա՛ն նստել, բայց յաճախ խնամակալուհի են լինում, որովհետեւ այնտեղի թագաւորները ներքին դաւերի կամ իրանց անառակ կեանքի չնորհիւ շատ կարճ են ապրում եւ գա՛ն մնում է մանկահասակ ժառանգներին. «Եթէ հնդկական իշխանութիւնը,—պնդում է Միլլ,—կառավարվում է աշխույժ եւ ինչպիսի կերպով, եթէ նրա սահմաններում կարգ է պահպանվում առանց բռնութեան, եթէ երկրագործութիւնը ծաղկած է այնտեղ եւ ժողովուրդը բարօրութեան մէջ է—չորս դէպքից երեքում դուրս է գալիս, որ այդ իշխանութեան կառավարողը կին է»։ Այնուհետեւ Միլլ յիշում է այն պայմանները, որոնց մէջ դատարարվում եւ ապրում են այդ կանայք եւ վերջացնում է ծանօթութիւնը ասեւթով, որ, եթէ այդ պայմանները նկատի առնենք, այդ կանանց պէտք է համարենք ապացույց այն բանի, որ «կանայք զարմանալի բերանաբեր ընդունակութիւն ունեն կառավարչական պաշտօնների համար» (Дж. Ст. Милль. Подчиненность женщины. 135—136 стр.)

Ինչպէս տեսնում էք, Տաճատ քահանայն վերագրել է Միլլին այնպիսի խօսքեր, որոնք չը կան նրա գրութեանը, եւ այնպիսի միտք, որի հակառակն է պնդում Միլլը։

Աւելցրէք սրա վրա, որ հեղինակը աւելորդ է համարում կին բռնիների գոյութիւնը նոյն իսկ կանանց բռնիներ համար, երեւի շատ յարմար համարելով օտար կնոյ մեկնակալ տղամարդ բռնիի առաջ, որ, բացի այդ, նա «ամուսնութիւնը կնոյ միակ նպատակն է» միտքը ապացուցանելու համար բերում է այն փաստը, թէ, եթէ մի երիտասարդ հրաժարվի մի աղջկանից նշանդէքի օրը եւ աղջիկը դուստրից առաջ իրան անարատ պահած լինի, հիստերիայով կարող է հիւսնադաւալ իսկ եթէ «միջին երիտասարդի հրաժարվելը, նրա հետ յարաբերութիւն է ունեցել եւ յղացել է, այն ժամանակ գրեթէ հիստերիա չէ պատահում, անշուշտ այն պատճառով, որ օրիորդն այդ դէպքում մտնում է կատարել իր նշանակութիւնը» (եր. 24—25), եւ որ, վերապէս, ապացուցանելու համար, թէ «մանկաբարձութիւնը կանանց արտօնութիւնը եւ մասնագիտութիւնը չէ եղել նոյն իսկ նախապատմական ժամանակում» (եր. 50), յաղթական կերպով մէջ է բերում այն փաստը, որ... մեր նախա-մայր Եւայի ծննդաբերութեան ժամանակ չը կար ոչ մի կին եւ ուրեմն Ադամ պէտք է նրան օգնած լինի այդ դէպքում,—աւելցրէք այդ բոլորը եւ ինքներդ որոշէք այդ գրքույկի արժէքը։

S. Յ.

ՌՈՒՄԱՑ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, յունիսի 15-ին, Պարսկիսի դերասանական խումբը ներկայացրեց իշխան Սում-բատովի «Արեւմուտը» (Запад) պիէսը, չորս գործողութեամբ։

Այդ պիէսի մէջ մենք տեսնում ենք, թէ ինչպէս խղճալի եւ ծաղրալի վիճակի մէջ են ընկել կայունաժառանգների հին տիպերը, որոնք անտեսութեամբ կարգին պարագիլ չը գիտէին եւ օգտվում էին իրանց ճորտերի տուած տարեկան հատկութիւններից։ Նրանք անանկանում են եւ քայլում ապարեղից, տեղի տալով կամ գիւղացիներին, կամ տղուկ հարստահարողներին, որոնց ձեռքն են անցնում նրանց հողերը։ Կայունաժառանգ իշխան Դուրեկովի դերը կատարեց մեծ տաղանդով Պարսկիսի, որ ներկայացրեց ազնուատոնմի մի տիպ նրան յատուկ սովորութիւններով եւ հայեացքներով։ Իշխան Դուրեկովին նման է եւ Նատալյա Մուրավյովա մի մատուղանա կին (Եւալովիկին), որ երազում է փայլում, անհոգ, զուարթ եւ մըշտադարձ գարնանային տրամադրութեան մասին, սակայն ստիպված է միշտ ամպերից երկիր իջնել, որովհետեւ նրա ամուսինը (Իլինսկի) անկարող է այնքան փող վաստակել, որ կարողանայ լիութիւն տալ կնոյ բոլոր քանակա-ճոյններին։ Եւրօպական կատարեց այդ դերը մեծ ներութեամբ։

Նորագոյն ձեւի վաճառականի դերում Խուրշիդի ցոյց տուեց, որ կանայք մէջ երեւան է եկել գլուխը—հարստահարողի մի խորամանկ

տիպ, որ գիտէ փայլ տալ իրան, ստեղծել բարձր դերք եւ փողի միջոցով հեռացնել իր ճանապարհից ամեն խոչընդոտներ։

Պիէսի մէջ դուրս են բերված եւ ուրիշ տիպեր, որոնք կրում են դրակաւն բնաւորութիւն, կայունաժառանգների կանայք, որոնք հսկում են իրանց գործերի վրա եւ վարում են անտեսութիւնը խելացի կերպով։ Այդ տիպերը գեռ անպայման համարական կերպարանք չեն ստացել։ Այդպիսի տիպեր ներկայացրին դերասանուհիներ Մատվեյեւա, Պոլեւա-կովա եւ Գրիգորեւնա։ Այդ տիպերը ապագայի աւելի համակրելի տիպերի նախակարագետներն են։

ՆԱՄԱԿ ԽՄԱՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 2-ին

Իւրաքանչիւր անհատ մի տեսակ գոհութիւն-թեթեւութիւն կը զգայ՝ երբ կը տեսնէ, որ հասարակութիւնը կատարում է իր պարտականութիւնը՝ համարում է օգնութեան թէ ազգ-օգուտ հաստատութիւններին, թէ կարօտեալներին եւ այլն—մի խօսքով երբ հասարակութիւնը իր կոչման բարձրութեան վրա է կանգնած։ Միւս կողմից այն հաստատութիւնները, որոնց գոյութիւնը կախված է հասարակութեան ինքնաճանաչութիւնից, պէտք է աշխատեն ամեն կերպ հասարակութեան հաւատը եւ խնամքը ի չարք գործ չը դնել, այլ արդարացի ներ նրա յոյսերը։

Այս անգամ մեր խօսքը «Մուրճի» նախկին ղեկավար պ. Ա. Արասխանեանի հաւաքած գումարների մասին է, որոնք հաւաքվում էին հասարակութիւնից «Մուրճի» պարտքերը ծածկելու համար։ Այժմ երբ այն «Մուրճի», որի գոյութիւնը վերջերս մասամբ պահվում էր յիշակալ նուէրներից եւ որի իրաւունքները վաճառվելուց, որքան լսել ենք, պ. Արասխանեան ստացել է բաւական պատկառելի մի գումար՝ հարց է ծագում՝ արդե՞ք պ. Արասխանեան պարտական չէ վերոյիշեալ նպատակով բոլոր հաւաքած գումարները վերադարձնել նուիրա-տուններին եւ կամ նրանց համաձայնութեամբ յատկացնել մի հասարակական գործի։

Գործադրելու եղանակը միանգամայն նուիրողների եւ Ա. Արասխանեանի իրաւունքը համարելով՝ կարծում ենք, որ յիշված գումարը չը պիտի մնայ անհատի օգտին, այլ անպայման կամ պէտք է վերադարձնել նուիրողներին, կամ յատկացվի մի որ եւ է հասարակական գործի։

Կ. Շիրինեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ա. Ա. Ֆրեդէ Թիֆլիսից Կո-շոր ամառանոցն է փոխադրվում յունիսի 18-ին։

Մեզ հեռագրում են Զաւալ-Օղիից, յունիսի 16-ից՝ հետեւեալը. «Այսօր թաղում են այն չորս զոհերին, որոնք մեռան սարսափելի հեղեղի ժամանակ։ Ամսիս 13-ին հայ Գեառգեառ գիւղում սարսափելի կարկուտ ոչնչացրեց ցանքերը եւ վարարեց Գեառգեառ գետը։ Այդ գետի մէջ թափվող փոքր գետակը այնքան մեծացաւ, որ քայքայեց կամուրջը։ Դաշտից վերադարձող երեք աղջիկ եւ մի կին, որոնք գնացել էին ճիւղ խոտ հաւաքում, հէնց որ կամուրջի վրա օտ են դնում, կամուրջը խորտակվում է եւ խեղճերը ընկնում են ջրի մէջ։ Մարմինները գտնվեցին զանազան տեղերում»։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Աւստրալի-թատրոնի բոլոր անկիւնների անդամները, յունիսի 13-ին միացած ժողովում վճռեցին՝ ժողովրդական թատրոնի չիւրութեան յանձնաժողովից խնդրել 2500 րուբլի նպաստ Աւստրալի-թատրոնի վերանորոգութեան համար, իսկ յունիսի 29-ին վրաց ազնւականների թատրոնում խառն ներկայացում համարով, բեմի վերանորոգութեան համար, եւ առանձին պատ-գամաւորութեամբ դիմել պ. Փիթոյեանին, որ նուիրէ արքունական հին թատրոնից մնացած անպէտք դեկորացիաները, ժողովրդական բեմին յարմարեցնելու համար։ Հայրց անկիւնայի նախաձեռնութեամբ խաղալու են «Կրօն-կրօն» վոլովիլը»։

Մենք հաղորդել էինք, որ առիկայ կովկասեան ցուցահանդէսի ժամանակ պէտք է տեղի ունենան ներկայացումներ, համերգներ, երեւոյթներ եւ այլ գուարճութիւններ։ Այդ գործի կազմակերպութեան համար ընտրվել կօմիտեղը հրաւիրել է հայկական բաժնի համար երաժիշտ Գարա-Մուրզային իր երգերի խումբով։ Մեզ տեղեկացնում են, որ երկու ամսվայ ընթացքում կը տրվեն հայկական երեսուն համերգ բազմաթիւ ժողովուրդական ծրար-

գրով, Բագրի հայերէն երգերից, ծրագրի մէջ մտնում են քրդերէն, թուրքերէն եւ օսմանեան երգեր եւս իսկ վրաց բաժինը յանձնվում է երաժիշտ Պալիբիլին:

Մեզ հաղորդում են, որ Բագրի նախագործական ձեռնարկութիւններից մէկը, այն է Մովսիսեանի եղբայրների եւ ընկերութեան նախագործ, իր բոլոր շինութիւններով, անցնում է անգլիական գրաւատերերի ձեռքը, որոնք համաձայն են վճարելու այդ վաճառքի համար մի միլիոն րուբլի այն պայմանով, որ ձեռնարկութեան կէսը համարվի նախկին տէրերի սեփականութիւն:

Ջրի մէջ խեղդելուց ազատող կայսերական առօրեայ ընկերութեան նախագահական վարչութիւնը մեզ խնդրում է յայտնել, որ, իր ստացած տեղեկութիւնների համեմատ, ներկայ տարվայ յունվարի 1-ից մինչեւ յունիսի 1-ը կուր գետում, Թիֆլիսի շրջանում, խեղդելուց ազատվել են 10 հոգի եւ նոյն ժամանակամիջոցում խեղդվել են 5 մարդ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնադպրոցները, չը ցանկանալով status quo թողնել հին լեզուների դաստաւութեան սխալները մէջ, վճենց «НОВОСТЬ» լրագրի խօսքով, այժմ եւ եթ դուրս գրել լատիներէն լեզուի դաստաւութիւնը գրիմադրանքների առաջին երկու դասարաններում:

Պետերբուրգից «Аргонавты» լրագրին հետագրում են. «Մայրաքաղաքների լրագրիները ազատված են այն բոլոր նախազգուշութիւններից, որ նրանք ստացել են զանազան ժամանակներում»:

Նոյն լրագրին հետագրում են, որ մամուլի գործերին վերաբերելով գլխաւոր վարչութեան չլրաբերականով յայտարարված է հետզհետեւ կանոնադրութեան վերաբերութեան մասին:

Հաղորդակցութեան ճանապարհների միջնադպրոցները թոյլատրեց կանանց գրաւել մի քանի պաշտոններ: Մինչեւ այժմ կանանց՝ երկաթուղիների վարչութիւնների մէջ յանձնվում էր միայն թղթերի արտագրութիւնը:

Պետերբուրգի մէջ թղթախաղը սաստիկ տարածված է: Եթէ մէկ տղա հաւաքվում են, հիւրասիրութիւն լինի, թէ հարսանիք, թախամիս գինի լինի, թէ տոնածառ երեխաների համար սիրելի, մենքը թղթախաղով են զբաղված: Երեխաները ինչ պիտի սովորեն իրանց ծնողներից: Մայրերը՝ իրանց զաւակներին թաղում են դպիսկների եւ աղայիների խնամքին ամբողջ օրերով եւ իրանք ամբողջ գիշերը թղթախաղով են անցկացնում, շատ անգամ մինչեւ առաւօտը թողլով են խաղում: Ի հարկէ, ամուսիններն էլ յետ չեն մնում իրանց լծակիցներից: Մէկ մարդ չունենք, որ իր ազդու խօսքով եւ խրատներով կարողանայ հասկանալ թղթախաղի կորստաբեր հետեւանքները: Եթէ մենք ունենայինք մի հատ լուսաւոր, իր կոչման արժանի քանանայ, շատ օգուտ կը բերէր այստեղի գաղութին: Գաղութը՝ անգոյն, հոգեւորականները՝ աւելի եւս անգոյն, ողբալի գրութիւն: Ի մեծ խայտառակութիւն հայերի, ունենք մի խումբ հայեր, որոնք իրանց ապրուստը թղթախաղով են հայթայթում: Այս պարոններից շատերը կուրենքից ամենախայտառակ կերպով վճարվել են:

Թեւեթի մեզ գրում են. «Ամբողջ մայիս ամիսը շարունակվեցին անձրեւները: Վերջապէս յունիսի 3-ից պարզվեց երկինքը, եւ սկսվեցին չորերը: Թեւեթը եւ նրա շրջակայ գիւղերը չորապատում են լինելով կովկասեան լեռներով գրեթէ ոչ մէկ տարի չեն ազատվում կարկուտի սարսափ ու հարուածից: Անցեալ մայիսի 15-ին եւ 16-ին տեղի է ունեցել կարկուտ թեւեթի 18 վերստ հեռավորութեան վրա գտնվող գիւղերում: Այս գիւղերը այնպիսի հարուած են ստացել կայսերութից, որ մինչեւ անգամ խաղողի որթերի վրա տերեւները չեն մնացել, արտերը գետնին են հաւասարվել: Բայց մի եւ նոյն թեւեթի գաւառում արդէն սկսել են կուրել կարկուտի դէմ: Միանշաղի, Նախարէտի եւ Մուկուզանի գիւղերում թափառական մեծ ալիքների վարչութիւնը այս տարվանից սկսած գործադրում է կարկուտի դէմ նարած առանձին տեսակի թնդանութիւն:

Երբ երկինքը ծածկվում է թուխ-թուխ ամպերով, որից կարելի է եզրակացնել կարկուտի գալը, այն ժամանակ այդ այգիներում սկսվում է թնդանութեան ծագումը, որից ցրվում են կարկուտներ ամպերով: Այդպիսով թագաւորական այգիները ազատվում են կարկուտից: Լաւ կը լինէր, որ այդ միջոցը ամեն տեղ կարողանային բանեցնել, բայց դժբաղդաբար բոլորեւն չեն կարող բանեցնել: Այդ բանը կարող են անել հարուստները, իսկ աղքատները՝ մինչեւ անգամ իրանց ապրուստը դժուարում են հայթայթել, ուր մնաց, որ այդպիսի ծախսն էլ աւելացնեն իրանց գլխին»:

Հաղախի գաւառի ՇԱՄՇԱԴԻՆ գիւղից մեզ գրում են. «Ամսիս 6-ին Շամադիների Վերին կարմիր-Աղբիւր գիւղը իր հարուստ գիւղերով, որոնք են Նաւուր, Բերդ, Նորաշէն եւ մասամբ Մովսէս գիւղ, ենթարկվեցին սարսափելի աղէտի: Կէս օրից յետոյ ժամը չորսին տեղացի փոթորիկախառն կարկուտ ընկղզի մեծութեամբ, որը տեւեց ուղիղ 15 րոպէ եւ ամբողջ վարուցանքը, բանջարանոցները ու այգիների մի մասը գետնին հաւասարեցրեց: Գիւղացիները իրանց յոյսերը դրել են կորկի վրա, որ սկսել են մեծ եռանդով ցանել, այնպէս որ, եթէ դրանց օգնութիւն չը լինի, շատ թշուառ վիճակի մէջ կընկնեն գիւղացիները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Gaulois» լրագրի հաղորդում է, որ Լիւր-Սալիսի պաշտպանները վճեցին պահանջել կառավարութիւնից, որ նա թոյլատրէ ազատ մուտ գործել Ֆրանսիա Դերուլդին, Գաբէրին եւ Բիւֆֆէին, որոնց որպէս վկաներ են ուղարկւում:

«Daily Chronicle» լրագրի Հոսթի թղթախաղի հաղորդում է, որ Վատիկանի եւ Միացեալ Նահանգների մէջ բանակցութիւններ են սկսվել ամէրիկական զեպանի պաշտօն հաստատելու մասին Վատիկանում:

«Temps» լրագրի թղթախաղի հետագրում է Կ. Պոլսից, որ սուլթանը կտրականապէս հրաժարվում է անգլիական մի ընկերութեանը կոնցէսիա տալուց Ակրայից մինչեւ Դամասկոս երկաթուղի շինելու համար: Այդ կոնցէսիան մի անգամ արդէն տրված էր այդ ընկերութեանը, որ կորցրեց իր իրաւունքները, նշանակված ժամանակամիջոցը բաց թողնելով պատճառով: Թիւրքաց կառավարութիւնը դիտաւորութիւն ունի սակայն վերադարձնել անգլիական ընկերութեանը նրա ծախսած փողերը երկաթուղու առաջին երկու քիլոմէտրը կառուցելու համար եւ ինքն աւարտել գիծը ու միացնել Դամասկոսը Մէկկայի հետ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Օդի մէջ զգացվում են թաթրոնական հոլեր: Ի՞նչ հասարակութիւնը սկսում է հետաքրքրվել լուրջ կերպով հայ թաթրոնական ներկայացուցիչների կազմակերպութեան հարցով: Թիֆլիսում կազմվել է թաթրոնական մասնագիտով, որ զբաղված է այդ գործի կազմակերպութեամբ:

Առաջիկայ աշնանը մենք կունենանք կանոնադր հայերէն ներկայացումներ: Հետաքրքրութիւն դէպի այդ գործը չարժեք է երեւանում, Ալեքսանդրօպօլում, Աստրախանում, Շուշում եւ ուրիշ տեղերում: Մի քանի խօսք այդ կարեւոր գործի մասին:

Պէտք է երախտապարտ լինել բազուկների: Արդարութիւնը այդ է պահանջում: Բազուկների չորհուրէ հայ թաթրոնական գործը պահպանվելու եւ մի որոշ առաջադիմութիւն կատարելու:

Եւ այժմ կարծես անկարելի մի բան է համարվում երեւակայնել Բագուն առանց թաթրոնի:

Բայց Բագուն հայ թաթրոնի դերը միայն տեղական չէր: Նա աւելի ընդարձակ էր: Բագուն բնավ պահպանվում էր հայ բեմի գաղափարը: Բագուն բեմը կոչված էր ապաստան տալու հայ դերասաններին եւ հարստացնելու թաթրոնական ընկերութեանը ապագայ հայ թաթրոնի աւելի ընդարձակ եւ միայն կազմակերպութեան համար:

Հասկանալի է, թէ ինչու Բագուն հայկական ներկայացումները ստացան առանձին նշանակութիւն եւ գրաւեցին մամուլի յատուկ ուշադրութիւնը:

«Մշակը» մանրամասն հաշիւներ էր տալիս այդ ներկայացումների մասին եւ հետեւում էր թէ դերասանական խմբի մէջ կատարվող առաջադիմութիւններին եւ թէ ընկերութեանը աստիճանաբար ծոխանալու նախադրութիւններին:

Հայ թաթրոնական գործում նշանաւոր է մի հանգամանք եւս: Հայ դերասանները, բաժանվելով խմբերի, ցրվեցին մեր գաւառները եւ այնտեղ տուրի ներկայացումներ:

Այդ խմբերի միջոցով կարճ ժամանակում գաւառի հասարակութեանը յայտնի դարձան այն պիէսները, որոնցով հարստանում էր հայ թաթրոնական ընկերութեանը: Այդ խմբերի միջոցով գաւառը ծանօթացաւ այն առաջնակարգ դերակատարների հետ, որ ունի հայ դերասանական խումբը:

Գաւառի ներկայացումների կազմակերպութեան յաճախ մասնակից էին ինքնուրուք եւ տեղական սիրողները եւ այդպիսով նպաստում էին դերասանական ընդունակութիւնների հանդէս գալուն:

Գաւառի մէջ թաթրոնական գործի ժողովրդականութիւնը ստանալով, ինքն ըստ ինքեան, անկասկած, առաջադիմութեան մի քաղ է:

Դա ընդհանուր տեսակէտից:

Սակայն գործի զարգացումը գաւառում ունի եւ մի ուրիշ բարեբար կողմ: Այդ այն է, որ նա նպաստում է թաթրոնական գործի կազմակերպութեանը նոյն իսկ կենտրոնում:

Անա ինչպէս: Երբ գաւառները ամենուրեք պահանջ կը զգան թաթրոնական ներկայացումներ ունենալու, այն ժամանակ այն կենտրոնական խմբերը, որոնք կը կազմվեն Թիֆլիսում եւ Բագուն, կարող կը լինեն հաստատ յոյս ունենալ, որ նրանք կարող են լրացուցիչ հասցնելու ունենալ գաւառական ներկայացումներին: Այն ժամանակ գործ կը գտնվի եւ երկրորդական դերասանների համար: Նրանք կօղովն այն ներկայացումներին, որ նրանք կուտումնասիրեն կենտրոնական թաթրոնում եւ յետոյ կը կրկին նրանց այն խուլ տեղերում, ուր անկարող կը լինեն գնալ կենտրոնական խմբի դերասանները:

Թիֆլիսի թաթրոնական մասնագիտով պէտք է շարունակի այն գործը, որ Բագուն սկսվել է մասնաւոր, կերպով եւ արդէն տուրի է բարեբար հետեւանքներ:

Այդ կազմակերպված դերասանական խումբը:

Հարուստ եւ խելացի դասաւորված բեմեր տուր: Անա այն երկու հիմնական պահանջները, որոնց իրութիւն տալու համար պէտք է աշխատէ մասնագիտով:

Տուէք մի խումբ, որ կարողանայ լուրջ կերպով ուսումնասիրել պիէսների մէջ դուրս բերված տիպերը, որ սովորի իր դերերը գիտակցական կերպով, հանդէս բերեցէ մի շարք այնպիսի պիէսներ, որոնք հետաքրքրութիւն չարժեն հասարակութեան մէջ իրանց մէջ չափած կենսական հարցերով եւ գաղափարներով, այն ժամանակ կարող էք ձեր պարտքը կատարած լինել եւ այն ժամանակ կարող կը լինէք պահանջներ անել հասարակութիւնից:

Իսկ հասարակութիւնը:

Արդեօք նա կը պահանջէ օգտաւէտ հասարակական գործը:

Այդ ապագան ցոյց կը տայ:

Որպէս զի մենք կարողանանք կառավարել հասարակութիւնը եւ հարուածել նրա անտարբերութիւնը, անհրաժեշտ է, որ կազմակերպողները նախօրօք անեն այն բոլորը, ինչ որ իրանցից է կանխված:

Գուցէ հասարակութիւնը ամենեւին տեղիք չի տայ նրան կառավարելու:

Վրձին

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆԻԹԻՒՆԻՅՑ

15 յունիսի

Պետերբուրգից «Օրէնսդրութիւնների ժողովածու» մէջ հրատարակված է Վլադիմիր Եւ Նիկոլայեւի քաղաքներում մաքսատներ հիմնելու եւ Նիժնի-Նովոգորոդի տնտեսական տեւաւորով պարագայներից վերցվող տուրքին առանց զօրքի:

վերաբերեալ ժամանակաւոր կանոնների հաստատման մասին:

Յունիսի 15-ին Մոսկովայից ժամանեց Մեծ Իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչ: Յունիսի 15-ին արտասահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Ալեքսեյ Ալեքսանդրովիչ:

Յունիսի 15-ին գնեցաւ ֆոն-Մոլտկէ եւ գերմանական զինուորական պատգամաւորութեան օֆիցէրները ներկայացան Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնային:

ԻԳԱ. Յունիսի 15-ին ցուցահանդէսը արդէն այցելել են աւելի քան 80,000 հոգի:

ՕԴԵՍՍԱ. Յունիսի 15-ին, ժամը 9 եւ 45 րոպէին, տիբեթեան արտակարգ դեսպանութիւնը, արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ Շեկինի ուղեկցութեամբ, արագ գնացքով ուղեւորվեց Պետերբուրգ: Տիրեցիներին հանդիսաւոր կերպով ճանապարհ դեպիցին այստեղից: Դեսպանութեան գլուխ՝ Լամա Դորժիեյ շնորհակալութիւն յայտնեց այն առանձնապէս սիրալիք ընդունելութեան համար, որ երեք օրվայ ընթացքում ցոյց տրվեց դեսպանութեանը առաջին եւ քաղաքում:

ՄՕՍԿՎԱ. Բերսեան երկաթուղու Փանիպոլ եւ Նեգորելայի կայարանների միջեւ № 73 ապրանքատար գնացքը ընդհարվեց հանդիպակաց կողմից եկող № 56 ապրանքատար գնացքի հետ: № 56 գնացքում շարքվեց երեք վագոն: Երկու չոգեկառքն էլ վնասվեցին: Անուարգել կոնդուկտորի երկու ձեռքն էլ կտրվել է:

Բոգոմալայա թաղում մեծ հրդեհ է սկսվել: 18 տուն է այրվել, կրակին զոհ են գնացել, որքան մինչեւ այժմ յայտնի է, երկու երեխայ:

ԼՕՆԻՕՆ. Համայնքների ժողովը, երկարատեւ վիճարանութիւններից յետոյ, ընդունեց որոշում այն կէտերը, որոնք վերաբերվում են ածուխի արտահանական մաքսին: Հիկա Բիչ վիճարանութիւնների ընթացքում ապացուցանում էր, որ անհեթեթեանք էր աւել, թէ այդ մաքսը չորհուրէ անգլիական ածուխը դուրս կը մղվի օտարերկրեայ չուկաներից: Իր ձեռքին եղած տեղեկութիւններով, որոնք ստացված են Ֆրանսիայից, Բելգիայից եւ Դանիայից, նա կարող է ապացուցանել, որ այդ մաքսը կընկնի միայն օտարերկրեայ սպառողների վրայ:

Կ. ՊՕԼԻՍ. Գալաթա թաղում մի 18 տարեկան յոյն պատանի հիւանդացաւ ժամաւորտի նշաններով: Ձեռք են առնված նախազգուշութեան միջոցներ:

ՄԱԴԻՐԻ. Պատգամաւորների ժողովը Սիլվիա հարց է տալիս վերջին կրօնական ընդհարումների մասին, արտունջ է յայտնում օրէնքների խախտման դէմ եւ յարգանք է պահանջում դէպի կաթոլիկների իրաւունքները (նիստ բողոքներ): Մօրէտ, պատախանելով, արդարացիում է իշխանութիւնների բռնած դիրքը եւ պնդում է, որ կաթոլիկներին այստեւեւեւ էլ թոյլ կը տրվի կատարել կրօնական, բայց ոչ թէ քաղաքական ցոյցեր: Նա յիշեցնում է, որ այդպիսի դէպքերում՝ պահպանողական մինիստրութիւնների ժամանակ էլ միշտ զօրքեր էին գետնից վաճառել: Մինիստրը յայտնում է, որ կառավարութիւնը ամենքին կը ստիպէ յարգել օրէնքները: Նիստը փակվեց աղմուկի մէջ:

ԲՕՏԵՐԿԱՍ. Կրիւզէր մի շարքով գնաց կամպէն: Նրան ճանապարհ դեպի համար կայարան էին եկել պետական իշխանութեան եւ քաղաքային վարչութիւնների բաղմոթի ներկայացուցիչներ: Ժողովրդի ահագին բազմութիւն օգեւորված ցոյց արեց ի պատիւ նախագահի:

ԿԱՄԳԵՆ. Կրիւզէր այս առաւօտ հասաւ այստեղ: Տրանսիլանիան նախագահի ընդունելութեան համար ընտրված մասնագիտով նախագահը ողջոյնի ճառ արտասանեց: Յետոյ Կրիւզէրին ընդունեց քաղաքային խորհրդաւանը:

ՇԱՆԳՀԱՅ. Լիւկուսի խնդրեցով, Շէն այցելութեան գնաց այստեղի բոլոր հիւպատոսների մօտ, որպէս զի համագի հետացնել Պէկինից բոլոր օտարազգի զօրքերը եւ մաքրել նաեւ Շանգհայի Լուրերին նայելով, հիւպատոսները այդ հարը յանձնեցին իրանց կառավարութիւնների վճին:

Պէկին, ձիւղ չէ օտարազգի մամուլի հաղորդած այն տուրը, որը թէ չինացի կառավարութիւնը օտարազգի օգնութիւն է խնդրել Տունֆուսեանի դէմ: Չինական տեղեկութիւններով, Տունֆուսեան իր համար հանգիստ նստած է իր ծննդավայրում առանց գործի եւ ծոխանքի:

Электротипография Грузинск. Т-ва, Большая-Ванская ул., № 72.